ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 21 » փետրվարի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ Մ. Անանյան

ԳԲԽ-16/17 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի 08.02.2017թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 08.02.2017թ. ներկայացրած բողոքով «Ֆոտոն» ՍՊԸ-ն հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.01.2017թ. թիվ 2 արձանագրությամբ 3-րդ չափաբաժնի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սուր Արթուր» ՍՊԸ-ն:

«Սուր Արթուր» ՍՊԸ-ն, մասնակցելով հրավերով սահմանված 5 չափաբաժիններից 4-ին, ներկայացրել է 148,650,570 ՀՀ դրամի գնային առաջարկ իսկ 3-րդ չափաբաժնի մասով զբաղեցրել է առաջին տեղ՝ 22,487,850 ՀՀ դրամ գնային առաջարկով: 3.1 հավելվածով սահմանված մասնագիտական փորձառության մասին հայտարարության մեջ ներկայացրել է 42,058,000 ՀՀ դրամի նախկինում կատարված նմանատիպ պայմանագրեր: Իբրև մասնագիտական փորձառություն՝ ներկայացրել է ռուսերեն լեզվով կազմված 15,002,500 ՀՀ դրամի պայմանագիր, որին կցվել է դարձյալ ռուսերենով կազմված համադրման ակտ /акт сверки/:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. հ 168-Ն որոշման 65-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետի համաձայն ներկայացրել է շուրջ 149 միլիոն ՀՀ դրամի գնային առաջարկ, որի համար 3.1 հավելվածով պետք է ներկայացներ առնվազն 74,325,285 ՀՀ դրամի նմանատիպ պայմանագրեր, որից գոնե 1 պայմանագիրը պետք է լիներ 29,730,000 ՀՀ դրամի:

Սակայն որակավորման փուլում, որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր, ներկայացրել է միայն 1 հատ պայմանագիր 15,002,500 ՀՀ դրամի չափով:

Ընկերությունը մեջբերել է «ՀՀ Գնումների մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 5-րդ հոդվածի 3-րդ մասը, 31-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. հ 168-Ն որոշման 65-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերը:

Ելնելով վերոնշյալից՝ Ընկերությունը խնդրել է չեղյալ համարել «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.01.2017թ. թիվ 2 և 01.02.2017թ. թիվ 3 արձանագրությունները՝ «Սուր Արթուր» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասով:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

Կենտրոնը 10.02.2017թ. թիվ 01/04-1/418-17 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին և խնդրել եռօրյա ժամկետում ներկայացնել «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Ի պատասխան Կենտրոնի 10.02.2017թ. թիվ 01/04-1/418-17 գրության՝ Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 16.02.2017թ. թիվ 02/61-8120Հ գրությամբ «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև Ընթացակարգի հրավերով սահմանված է, որ հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է՝ ըստ առանձին չափաբաժինների, ուստի յուրաքանչյուր մասնակցի մասնագիտական փորձառության համեմատությունն ու գնահատումը իրականացվում է Ընթացակարգի շրջանակներում ներկայացված ամենաբարձր գնային առաջարկի մասով:

Ընթացակարգի շրջանակներում ամենաբարձր գնային առաջարկը Ընկերության կողմից ներկայացվել է 1-ին չափաբաժնին՝ 65,732,400 ՀՀ դրամ, սակայն վերջինիս առաջին տեղ զբաղեցրած մասնակից չի ճանաչվել և իրեն պահանջ չի ներկայացվել տվյալ չափաբաժնի մասով որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման համար:

Ընկերությունը 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել միայն 3-րդ չափաբաժնի մասով, որը կազմել է 22,487,850 ՀՀ դրամ:

Պատվիրատուն մեջբերել է ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի h 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետը:

Պատվիրատուն տրամադրել է նաև «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 14.02.2017թ. ժամը 17:00-ին նշանակված նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ԳԲԽ-16/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-16/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 01.26.2017թ. հայտ է ներկայացրել «Սուր Արթուր» ՍՊԸ-ն:

3. Ընթացակարգի հրավերին՝ «Սուր Արթուր» ՍՊԸ-ի մասնագիտական փորձառության մասին հայտարարության հավելված 3.1-ը:

4. Ընթացակարգին գնային առաջարկ հավելված 4-ով՝ «Սուր Արթուր» ՍՊԸ-ն 3-րդ չափաբաժնի մասով առաջարկում է պայմանագիրը կատարել 22,487,850 ՀՀ դրամով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2017թ. ժամը՝ 09:30-ի թիվ 3 արձանագարության 3-րդ կետի համաձայն՝ «Մասնակիցների կողմից որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել»:

6. «Սուր Արթուր» ՍՊԸ-ի կողմից, որպես մասնագիտական փորձառություն, ներկայացվել է **ռուսերեն լեզվով** պայմանագիր (Государственный Контракт на поставку мебели н.74, 26 октября 2016г.):

4. <u>ԳԲԽ-16/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի 08.02.2017թ. ներկայացրած բողոքը, Երևանի քաղաքապետարանի 16.02.2017թ. թիվ 02/61-8120Հ գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

«Լեզվի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) **մասնագիտական փորձառություն.**

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված

ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվայի գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի ինգապատիկը, ինչպես նաև, եթե գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ ավիասպասարկման ծառայությունները կամ, եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին.

3) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

«Սուր Արթուր» ՍՊԸ-ի մասնագիտական փորձառության մասին 26.01.2017թ հայտարարության հավելված 3.1-ով հայտնել և հավաստել է, որ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով գնում կատարելու Ընթացակարգին հայտը ներկայացնելու տարվան և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է մի շարք պայմանագրեր և պարտավորվում է նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.02.2017թ ժամը 09:30 տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի՝ մասնակիցների կողմից որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերել՝ չնայած այն հանգամանքի, որ «Սուր Արթուր»

ՍՊԸ-ի կողմից ներակայացված պայմանագիրը ներկայացվել է ռուսերեն լեզվով՝ Государственный Контракт на поставку мебели н.74 (26 октября 2016г.):

Նման պարագայում Կենտրոնը գտնում է, որ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/56» ծածկագրով գնման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 65-րդ կետով սահմանված պահանջների խախտում, քանի որ «Սուր Արթուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ հանդիսացող պայմանագիրը ներկայացվել է ռուսերեն լեզվով և առկա չի եղել պաշտոնական թարգմանություն, ինչի պարագայում առկա էին բավարար հիմքեր «Սուր Արթուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում Պատվիրատուի կողմից անհամապատասխանություններ արձանագրելու համար, մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2017թ. ժամը՝ 09:30-ի թիվ 3 արձանագարության 3-րդ կետի համաձայն՝ «Մասնակիցների կողմից որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 08.02.2017թ. ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել գնահատող հանձնաժողովի 01.02.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացրած որոշումը՝ «Սուր Արթուր» ՍՊԸ-ի մասով և որպես հետևանք դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Սուր Արթուր» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-16/17 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պարանյան